№ 84 Յունիսի 1 (13) **1879** Յունիսի 1 (13) № 84

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոն Ռուսաստանում:—Ներքին տեսութիւն: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Բէլգիա:—Խառն լուրեր:—Յայտարարութիւններ:—Բանասիրական: Ամուսնութիւն և եկեղեցի:

ԹԱՏՐՈՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին ժամանակները մի զարմանալի երևոյթ է նշմարվում Ռուսաստանի թատրոնական գործի մէջ: Թէև այնքան երևելի բեմական տաղանդներ, գուցէ, չը կան այժմ ռուսաց բեմերի վրա, ինչպէս եղել են քառասուն, յիսուն տարի սրանից առաջ, բայց ուրիշ կողմից ռուսաց թատրոնական գործին գրեթէ ամեն տեղ սկսում են մասնակցել հասարակութեան բարձր դասակարգի, ազնւականների և ինտելիգէնցիայի ներկայացուցիչները:

Նա այդ երևոյթը նշմարվում է ոչ թէ միայն տղամարդիկների վերաբերութեամբ, բայց և անթիւ կանայք և օրիորդներ, արիւնի և մտաւոր արիստոկրատիային պատկանող, մտնում են բեմը և նուիրում են իրանց թատրոնական գործին:

Գուցէ եւրոպական ոչ մի երկրում երբէ.ք այդ տեսակ երևոյթ չէ եղել և նշանաւորն այն է որ ոչ թէ միայն ռուսաց մայրաքաղաքների բեմերի վրա դուք կը պատահէ.ք հասարակութեան բարձր դասակարգից դուրս եկած դերասաններին և դերասանուհիներին, բայց նոյնը կը տեսնէ.ք գրեթէ իւրաքանչիւր գաւառական քաղաքի բեմի վրա: Մի տեղ կը տեսնէ.ք որ մի գեներալի աղջիկ օպերայի երգչուհի է դառնում, մի ուրիշ տեղ որ ունևոր կալուածատէր, կամ իրաւաբանութեան կանդիդատ իրանց դերասանութեան են նուիրում, մի երրորդ քաղաքում մի հրաժարական տուած գվարդիայի օֆիցէր, նշանաւոր ընտանիքին պատկանող, թողնում է իր փայլուն ասպարէզը իր ամբողջ կեանքը բեմական արհեստին նուիրելու համար, և այլն....

Նշդ մի շատ մխիթարական երևոյթ է և ապացոյց է որ ռուսաց հասարակական կարծիքը բակում է նայել բեմի, թատրոնի վրա, որպէս մի ազնիւ, դաստիարակիչ, հասարակական վսեմ գործունէութեան վրա:

Գուցէ այդ երևոյթը, բացատրվում է նորանով, որ ռուսաց արիստոկրատիան և ինտելիգէնցիան շատ պարապմունքներ չը գտնելով իր համար, գրաւվում է բեմական արհեստով,—բայց այնուամենայնիւ դա այնքան համակրական երևոյթ է, որ անկարելի է չը ցանկանալ որ և մեր հայոց հասարակութիւնը աչխատէր օրինակ առնել ռուսաց հասարակութեան մէջ վերջին տարիներում այդ յայտնվող երևոյթից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բագու, 21 մայիսի

Կարդալով ձեր պատուելի լրագրի մէջ «Արարատեան ընկերութեան» օգտին նուիրատւութեանց մասին, ինձ ևս պարտաւոր համարեցի ըստ չափու կարողութեանս օգնել նիւթապէս այդ վսեմ ընկերութեան:—Այդ նպատակով աչխողվեց ինձ ժողովել իմ բարեկամներից առանց ստորագրութեան 78 րուբլ 40 կոպ., սրա վրա աւելացնելով ինձանից 30 րուբլ 60 կոպ., բաղդ ունեմ ուղարկել ձեր խմբագրութեան ընդ ամենն հարիւր և ինն րուբլ և խնդրել հասուցանել այդ գումարն ուր հարկն է, ծանուցանելով այս մասին ձեր պատուելի լրագրի մօտաւոր համարների մէջ:

Ընդունեցէ.ք և այլն:

Եղիսաբեթ Խաչատուրեան Սարգսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութիւնից անկախ պատճառներով հրատարակում ենք այս օրվայ համարը կէս թերթի մեծութեամբ:

—

«Մշակի» № 81-ի մէջ տպված Մեղրիի նամակի տակ Խաչատուր Մ. Մալումեանց ստորագրութեան տեղ սխալմամբ դրված էր Խաչատուր Մ. Մամուլեանց:

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

***

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Վերջին ամիսները եւրոպական երկու կաթօլիկ պետութիւնների պարլամենտներում և հասարական կարծիքի մէջ միաժամանակ յարուցվեցաւ մի և նոյն խնդիրը, որ, ինչպէս երևում է, սաստիկ յուզում է այդ երկու երկիրների թէ պարլամենտական նիստերը և թէ նրանց հասարակական կարծիքը:

Մենք խօսում ենք Ֆրանսիայի և Իտալիայի վրա, որտեղ միաժամանակ յարուցվեցաւ քաղաքական ամուսնութեան և ամուսնական բաժանման (ապահարզանի) խնդիրը:

Կաթօլիկ եկեղեցին (և առհասարակ եկեղեցին) շատ խիստ է ամուսնական կապերի վերաբերութեամբ: Նա համարում է ամուսնական կապերը անխզելի, բացի գուցէ երեք պատճառներից՝ ամուսիններից մինի մահը, նրանցից մինի անբարոյականութիւնը, կամ վերջապէս ամուսիններից մինի ամուսնական անկարողութիւնը:

Ուրիշ, որ և է բարոյական պատճառներ ապահարզանի համար եկեղեցին չէ ընդունում:

Այժմ, երբ մի կողմից իտալական պարլամենտը յարուցանում է պարտադիր քաղաքական ամուսնութեան խնդիրը, իսկ միւս կողմից ֆրանսիական պարլամենտի ձախ կողմին պատկանող ճարտար առենաբան պ. Նակէ պահանջում է Ֆրանսիայում թէ քաղաքական ամուսնութեան և թէ ապահարզանի օրէնքի մտցնելը, գուցէ ձեր ընթերցողներին հետաքրքիր կը լինի իմանալ ինչ ապացոյցների վրա են հիմնում և միշտ հիմնել են իրանց դատողութիւնները կղերական այդ երկու երկիրներում հին օրէնքի հակառակորդները:

Ամուսնութիւնը մի ընկերակցութիւն է, ինչպէս ամեն մի ընկերակցութիւն, այն զանազանութեամբ որ ամուսնական ընկերակցութիւնը հասարակութեան առջև աւելի բարձր, վսեմ պատասխանատւութիւն է յանձն առնում, քան թէ որ և է ուրիշ մի ընկերակցութիւն: Ամեն մի ընկերակցութիւն աչ.քի առաջ ունի այս կամ այն մասնաւոր և հասարակական օգուտ, ունի հասարակութեան վրա բարոյական ներգործութեան կամ հասարակութեան համար նիւթական արդիւնաբերութեան նպատակ: Բայց ոչ մի ընկերակցութիւն չունի հասարակութեան մէջ այնքան բարձր, վսեմ պաշտօն, որքան ամուսնութիւնը և ընտանիքը, որովհետև ամուսնութեամբ երկու անձնաւորութիւններ կապվում են թէ իրանց փոխադարձ կատարելագործութեան և երջանկութեան համար, թէ մարդկութեանը նոր սերունդ արդիւնաբերելու, և այդ նոր սերունդը արժանաւոր կերպով դաստիարակելու համար:

Բայց ամեն մի ընկերակցութեան կապերը, երբ ընկերակցութեան երկու կողմերն էլ համոզվում են թէ ընկերակցութեան գործերը անաջող են գնում, թէ մասնակցողները փոխանակ օգտվելու վնաս են կրում, կարելի է լուծել: Իսկ ամուսնական ընկերակցութիւնը, որքան էլ անաջող յայտնվէր, որքան էլ դժբաղդ լինէին ընկերակցութեան երկու կողմերը, կաթօլիկ եկեղեցին անհնարին է համարում քանդել:

Ամուսնական ապահարզանը կաթօլիկ եկեղեցին անբարոյականութիւն է համարում և այդ պատճառով ընդունում է որ երկու ամուսինները կարող են բաժանվել միմիայն այն ժամանակ, երբ նրանցից մինը կամ անզօր է ֆիզիկապէս, կամ երբ նրանցից մինը անբարոյական է: Կարծես թէ չէ կարելի որ երկուսն էլ բարոյական, օրինաւոր, ազնիւ մարդիկ լինէին, բայց նրանց բնաւորութիւնները չը յարմարվէին միմեանց:

Երևակայեցէ.ք ձեզ որ մի տղայ և մի աղջիկ պսակվում են, ամուսնական կապեր են կապում իրար մէջ, համոզված լինելով, ի հարկէ, որ ճանաչում են միմեանց բնաւորութիւնը, որ ընդունակ են միասին ընտանեկան գործը առաջ տանելու: Անցնում են մի քանի տարիներ, գուցէ մի քանի ամիսներ,—և երկու ամուսինները նոր են տեսնում թէ բոլորովին չէին ճանաչում միմեանց, թէ նրանց բնաւորութիւնները բոլորովին անյարմար են միմեանց, թէ նրանց միասին ապրելը երկուսին էլ վնաս է, որովհետև նրանց մէջ անդադար ծընվում են անբաւականութիւններ, կռիւներ, երկպառակութիւններ,—և այդ բոլորը վերջանում է փոխադարձ անհաշտ թշնամութեամբ: Բայց եկեղեցին ասում է՝ այդ ոչինչ չէ նշանակում, դարձեալ միասին պէտք է ապրէ.ք, անբաժան լինէ.ք մինչև մահը, այդ տեսակ բարոյական պատճառներ նշանակութիւն չունեն: Ի՞նչ է դրա հետևանքը. թշնամութիւնը սաստկանում է, յարաբերութիւնները անտանելի են դառնում, բայց դարձեալ ընկերակցութեան երկու անդամներն էլ պէտք է մընան միմեանցից անբաժան: Այդպիսով նրանց ոյժերը, նրանց բարոյական զօրութիւնները նուազվում են, սպառվում են ապարդիւն կռւի մէջ, նրանց կեանքը անպէտք է անցնում թէ հասարակութեան և թէ իրանց անձի բաղդաւորութեան համար: Նրանք սկսում երկուսն էլ, որոնցից ամեն մէկը գուցէ շատ ազնիւ անձնաւորութիւն է և մէկ մէկից ջոկ կարող էր շատ օրինաւոր անհատ և պիտանի անձն լինել հասարակութեան համար, սկսում են իրանց սրտի մէջ մին միւսի մահը ցանկանալ.... դա արդէն յանցանքի, եղեռնագործութեան սկիզբն է: Բայց եկեղեցին ասում է՝ դարձեալ պէտք է միասին ապրէ.ք:

Վերջապէս գուցէ և պատահում է մի եղեռնագործութիւն.... Այն ժամանակ քաղաքական դատարանը, որ գործ չունէր եկեղեցական ամուսնութեան հետ, իրաւամբ դատապարտում է եղեռնագործին:

Բայց աւելի վատ է, երբ երկու ամուսինների երկպառակութեան, անհաշտ թշնամական յարաբերութիւններին վկայ են լինում զաւակները, որոնք մանուկ օրերից ընտելանում են այդ կռիւներին, կրթվում են անբաղդ ծնողների թշնամութեան և բարոյական տանջանքների շրջանում: Ահա նոր սերունդը որ պատրաստում է ընտանիքը, ահա ապագայ քաղաքացիներ, որոնք մեծանում են ծնողների երկպառակութեան, շատ անգամ մինչև կատաղութեանը հասցրած թշնամական յարաբերութիւնների օրինակները իրանց աչ.քի առաջն իրանց քաղցր հասակից տեսնելով:

Ամբողջ կաթօլիկ աշխարհում այս բօլէխս պատերազմ է նշմարվում եկեղեցու և քաղաքական իշխանութեան, պետութեան մէջ: Կաթօլիկ եկեղեցին դարերով անշարժ է մնացել, ոչ մի քայլ չէ արել դէպի առաջ, չէ կամեցել յարմարվել ժամանակի պահանջման: Իսկ այն հիմնարկութիւնը, որ անշարժ է մնում, առաջադիմութիւն չէ անում, նա բնականապէս պէտք է տեղ տայ մի ուրիշ հիմնարկութեան: Ո՞վ էր արգելում կաթօլիկ եկեղեցուն առաջ գնալ, յարմարվել ժամանակակից պահանջման, անդադար նոր հոսանք, նոր, ժամանակակից տարրեր իր մէջն ընդունել: Նա այդ չը կարողացաւ կամ չուզեց անել,—թող չը դանդատվի, եթէ պետութիւնը նրան պատերազմ է յայտնել և հետզհետէ նրա տեղն է բռնում, խլելով մի առ մի նրա հին իրաւունքները, ինչպէս Գերմանիան է արել: Եկեղեցական ուսումնարանների տեղ,—կաթօլիկ երկիրները մտցնում են պետական դպրոցներ. եկեղեցական ամուսնութեան տեղ,—հետզհետէ քաղաքական ամուսնութիւն է հաստատվում. եկեղեցական մկրտութեան և եկեղեցական թաղմանն անգամ փոխարինում են քաղաքական մկրտութիւնը և քաղաքական թաղումը:

Կաթօլիկ եկեղեցին ինքն իրան անշարժութեամբ դատապարտելով,—դատապարտեց իրան մօտիկ ապագայում և մահվան:

Կաթօլիկ եկեղեցին կարող է իրան ազատել հաստատ մահից միայն մի միջոցով ընդունելով իր մէջ ժամանակակից սկզբունքները:

Ահա ինչ ներքին խռովութիւններ են ներկայացնում մեզ այս բօլէխս եւրոպական կաթօլիկ երկիրները:

Փարիզ. ***

Дозволено Цензурою 31 Мая 1879 г. Тифлисъ.
Типографія А. А. Михельсона

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Մայիսի 28-ին կը սկսվին տեղիս երկաթ դպրոցների տարեկան հարցաքննութիւնները։ Ալէքսանդրապօլի փոխանորդը մի ամսից աւելի է, որ ճանապարհորդում է գաւառի գիւղերում։ Այցելելով 80-ի չափ գիւղեր, չար լեզուները պատմում են, որ գերապատիւ հայրը քաւական շատ աջահամբոյր է հաւաքել.»

—

Մեզ հաղորդում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, որ վիճակային հայոց հոգևոր դպրոցի գանձապահ հոգաբարձուի մօտ գտնվում է ուսումնարանական դրամ 14,000 ռուբլ առանց տոկոսի, իսկ պատգամաւորութիւնը լուռ ու մունջ է այդ մասին։

—

ԹԻՖԼԻՍԻ Հալաբար բաժնի Ս. Էջմիածին եկեղեցում մայիսի 24-ին կատարվեցաւ հանդուցեալ Ս. Նազարեանցի հոգեհանգիստը։ Մենք զարմանում ենք, որ գաւառական քաղաքներից լուրեր չենք ստանում Ս. Նազարեանցի յիշատակը յարգելու մասին։ Միայն Ն.-Նախիջևանը պատուեց ազգի հանգուցեալ մշակի յիշատակը։ Չենք կարող ենթադրել, որ հասարակութիւնը այնքան ստոր է, որ անշնորհակալ գտնվի դէպի մի այնպիսի մարդ, որ այնքան արդիւնաւոր կերպով գործել է ազգային ասպարիզի վրա։

—

Հանգուցեալ Ս. Նազարեանցի յիշատակը յարգելու համար, մեր կարծիքով ԹԻՖԼԻՍՈՒՄ մի մասնաժողով պիտի կազմվի, որ նուիրատուութիւններ հաւաքէ և հանգուցեալի գերեզմանի վրա չքեղ արձան կանգնեցնէ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵԼԳԻԱ

Որովհետև այս բօպէիս Բէլգիայի հասարակական կարծիքը բացառապէս զբաղված է տարրական ուսման 1842 թ-ի օրէնքի վերաքննութեամբ, ուստի մենք աւելորդ չենք համարում խօսել այդ հարցի վերաբերութեամբ, մէջ բերելով ազգային ժողովի ներկայացուցիչների մի վիճաբանութիւնը, որը շատ հետաքրքիր է թէ ասենախօսների յայտնած զեղեցիկ մտքերով, և թէ հակառակ կողմերի միմեանց զեղեցիկ պատասխաններով։ Հռետորների մէջ ուշադրութեան արժանի էին մանաւանդ պ. պ. Ցակոբ և Ժօտտրան, և որովհետև այս վերջին նիստի ժամանակ խօսելու կարգը պ. Ցակոբին էր պատկանում, ուստի մենք կը սկսենք նրա ասածներից։ Նա բարձրանում է ամբիոնը, և սկսում է այսպէս։

«Ես կարծում եմ, որ իմ անցեալ ճառի մէջ ինձ յաջողեց ապացուցանել, որ պետութիւնը դաստիարակում է երեխաներին, իբրև ընտանիքի հայրերի պատգամաւոր. խօսենք ուրեմն, իբրև ընտանիքի հայր։ Դաստիարակութիւնը մի միջոց է,—միջոց, որով կազմվում պատրաստվում է մարդս, որպէս զի հետևի իր ճակատագրին։ Տարրական ուսումը պատրաստում է մարդուս այնպէս, ինչպէս որ պահանջում է նրա կեանքի նպատակը։ Ուրեմն ամեն բան կախված է նպատակից։ Մենք—կաթոլիկներս, կարծում ենք, որ ամեն բան պէտք է դիմէ մի ապագայ կեանքի, և որ մարդս աշխարհիս երեսին ոչ այլ ինչ է, բայց եթէ մի անցաւոր ճանապարհորդ։ Փիլիսոփաները համաձայն են իմ կարծիքիս հետ և ես հիացած եմ նրանց կարծիքից, որ այսպէս յաջող դէպքին օգնում է իմ մտքերիս։ Մենք ամեն դէպքից օգուտ ենք քաղում ուսման մէջ սողացնելու կրօնի և բարոյականութեան ճշմարտութիւնները։ Ահա թէ ինչպէս ենք կազմում մենք մեր ապագայ սերունդը։ Խօսենք այժմ ազատամիտների մասին։ Եթէ կայ մի ազատամիտ, դա Բրիւսելի համալսարանի փիլիսոփայութեան պրոֆէսօրն է։»

Այս ակնարկութեանը պարոն Օլէն պատասխանեց, որ նա բնաւ ազատամիտ չէ։ Իսկ պ. Ժօտտրան աւելացրեց, որ նա հաւատում է Աստուծուն և հոգու անմահութեանը, բայց նա ազատամիտ չէ։ Այս ընդհատումները անախորժ թուեցան պ. հռետորին, և նա զարմացք յայտնեց, որ պ. Օլէն նրան ընդհատեց. յետոյ նա շարունակեց իր խօսքերը ասելով, որ իր սեփական կարծիքով ուսումնարանի մթնոլորտն անգամ պէտք է կրօնական լինի... և որովհետև, հռետորի կարծիքով, իւրաքանչիւր մարդ յարմարեցնում է բարոյականութիւնը իր կրօնին, ուրեմն այդ խօսքերից հետևում է, որ իւրաքանչիւր ընտանիքի հօր համար մի առանձին ուսումնարան պէտք է հիմնել, և այդ այն պարզ պատճառով, որ իւրաքանչիւր հայր իր քէֆի ուզեցածին պէս է յարմարեցնում բարոյականութիւնը իր կրօնին։

Պ. Ցակոբը շարունակեց իր խօսքերը։

«Ուսման մէջ միութիւն է հարկաւոր։ Զէզոքութիւնը թուլութեան նշան է։ Այն ուսուցիչը, որ չէ կարող խօսել նշանաւոր հարցերի մասին, նա շատ անգամ ստոր է այն ուսուցչից, որ գործնական համոզմունքներ ունի։

«Մենք չենք կամենում հարկադրել ուրիշներին մեր գաղափարներն ընդունելու, բայց մենք կամենում ենք, որ բազմատեսակ ուսումնարաններ ունենանք։ Միջոցը շատ պարզ է, բաւական է միայն հիմնել կաթոլիկական ուսումնարաններ, բողոքական ուսումնարաններ, չէզոքական ուսումնարաններ։ Մենք չենք կամենում հակառակել ոչ ոքի գաղափարներին, բայց մենք կամենում ենք, որ մեր գաղափարներին էլ ոչ ոք չը հակառակի։ Բայց մեզ պատասխանում են—ոչ։ Ուսումը ամենքի համար ընդհանուր պէտք է լինի։ Թերևս կը ստիպեն մեզ և չէզոք ուսումնարաններ, ինչպէս Զուիցերիայում։ Բայց ոչ, մենք կաթոլիկ ենք, և մենք մեծամասնութիւն ենք կազմում, և մենք բաց—աշկարայ պատասխանում ենք, որ չէզոք ուսումնարանը չէ համապատասխանում մեր ձգտումներին։ Եթէ պէտք է պաղեցնել մեկին, մենք կարծում ենք, որ աւելի լաւ կը լինի փոքրամասնութեանը պաղեցնել, քան թէ մեծամասնութեանը։ Իմ կարծիքով զարմանալի հակասութիւններ են պատահում, օրինակ կամենում են, որ մի և նոյն ուսումնարանների երեխայոց խիղճը ազատ լինի, և մի և նոյն ժամանակ թոյլ են տալի ուսումնարանում խաչի ներկայութիւնը։ Հարցնում եմ, թէ մի հրէայ երեխայի համար սրանից էլ ինչ կարող է աւելի վիրաւորեցուցիչ համարվել, քան թէ տեսնել այն Քրիստոսի պատկերը, որին նրանք խաչել են։ (Աջակողմը ուրախութեան նշաններ է արտայայտում)։ Բրիւսելում ծայրայեղութիւնն այն աստիճան հասցրին, որ մինչև անգամ մի ուսումնարանից վերցրին խաչը։ Հարցնում եմ, թէ արդեօք խաչը պէտք է մնայ ուսումնարանում թէ ոչ։—Պատասխան չը կայ։—Խաչը պէտք է պահել ուսումնարանում, բայց ուսումնարան պէտք է հիմնել նայելով ազգաբնակութեան քանակութեանը. եթէ օրինակ մի գիւղում կամ քաղաքում բողոքական շատ են, այնտեղ բողոքական ուսումնարան հիմնեն, իսկ եթէ կաթոլիկներ շատ են, հակառակը։ Ինչ կը վերաբերի մեզ—կաթոլիկներս, մենք շատ խաղաղասէր ու բարեմիտ ենք (!) իսկ դուք, (դառնալով դէպի ձախակողմեանները) դուք լի էք չարակամութեամբ։ (Ձախակողմը խռովութեան աղմուկ է բարձրացնում։ Ընդհատումներ ատենախօսին)։ Մենք պարտական ենք երեխաներին ամեն լաւ դաստիարակութիւն, ահա սահմանադրական ճշմարտութիւնը. և մենք սրբութեամբ ենք (!?) կատարում այդ պարտականութիւնը...

«Ես մի առ ժամանակ, խաղաղութիւնը պաշտպանելու համար, համաձայնեցայ ընդունել չէզոք ուսումնարանի սկզբունքը, բայց ես այն եզրակացութեան հասայ, որ մինչև որ չը վերջացնեն գաղափարների ուսուցանելը, երբէք չէ կարելի չէզոք ուսումնարան ունենալ։ Ոչինչ բարոյական միաք չը կայ, որին հասարակութիւնը մերժած լինի. և շատ ժամանակ չէ, որ մի ազատամիտ լրագիր ասում էր, որ անաստուածութիւնը մի բարոյական հիւանդութիւն է, և ես բոլորովին համաձայն եմ լրագրի կարծիքի հետ։ Բոլոր այն խօսքերից, որոնք ասուել են ձախակողմեան ատենախօսներից, ես այն եզրակացութեան հասայ, որ իսկապէս չէզոք ուսումնարան չէ կարող լինել, այլ թէ կարող է միայն մի տեսակ պետական կրօն լինել։ Վերջին ժամանակներս խօսում էին դաստիարակի ազատութեան մասին. այդ խօսակցութիւնը կրճատվեցաւ։

«Մեզ արդէլքներ են դնում և հակառակում են միայն նրա համար, որ մենք ասում ենք.—եթէ Աստուած չը կայ, ուրեմն և բարոյականութիւն չը կայ։ Իսկ իրանք, հակառակորդները ընդունում են մի անկախ բարոյականութիւն։

«Բայց դուք չէք կասկածում, որ դուք նոյնպէս հալածված էք մի քանի փիլիսոփաներից ինչպէս և մենք։ Նրանց և ձեր մէջ մի անդունդ կայ, որ ձեզ բաժանում է։ Զէ՞ որ այնպիսի խօլական մատերիալիստներ կան, որոնք ուրանում են հոգու գոյութիւնը։ Մինչև անգամ կան և այնպիսիները, որոնք ուրանում են աստուածութիւնը։ Ո՞ւմ են կամենում յանձնել ժողովրդի դաստիարակութիւնը, եթէ ոչ հոգևորականներին, որոնց կոչումը և պաշտօնն իսկ ուսուցանելու մէջն է կայանում։ Հոգևորականը կանչված է Աստուծուց միայն դաստիարակելու, ուսուցանելու։ Այդ պաշտօնը հոգևորականներին է պատկանում։ Միայն մի բարոյականութիւն կայ, ինչպէս և միայն մի Աստուած կայ։ Մենք չենք ուրանում, որ մարդ խղճմտանք ունի, և չենք էլ կամենայ դրա մասին երկար խօսել, այդ կը նշանակէ խորտակել արդէն մի բացված դուռ։ Բարոյականութիւն ասելով մենք հասկանում ենք այն վարդապետութիւնների ամբողջութիւնը, որը ընդունված է ազգերից։ Ճշմարիտ է մենք չենք ուրանում մարդուս սրտի բարութեան զգացմունքը, բայց այդ զգացմունքը մի որոշ մարմին չունէ։ Բայց եթէ մենք կարողանայինք տեսնել Աստուծուն դէմ ու դէմ կանգնած, այն ժամանակ, անշուշտ, մենք մի կատարեալ գաղափար կը կազմէինք բարոյականութեան մասին, բայց դժբաղդաբար, այս այսպէս չէ, և եթէ միայն մի բարոյականութիւն կայ, մարդս ընդհակառակը իրան համար ստեղծել է հաղարը։

«Անցեալ դարու վերջերը մի տեսակ բարոյականութիւն էին հնարել, որին հանրապետական բարոյականութիւն էին անուանում։ Բօբէսպիէրը այդ մասին մի ճառ կարդաց, որի բովանդակութիւնը թարգմանվեցաւ ամեն լեզուներով, որպէս զի բոլոր աշխարհը կարողանար ընդունել հանրապետական բարոյականութիւնը։ Բէրնարդէն դը Սէն-Պիէրին—Pual et Virginie նշանաւոր բանաստեղծ հեղինակին պարտաւորացնում էին, որ հանրապետական բարոյականութեան հիման վրա մի բարոյական ձեռնարկ շինէ. բայց հռչակաւոր հեղինակը հրաժարվեց դրանից. այնքան դժուար էր այդ առաջարկութիւնը։ (Ընդհանուր ծիծաղ)։

«Թողնենք բարոյականութիւնը։ Բէլգիական կղերականների մասին մի այլանդակ գաղափարներ են կազմել։ Պ. Վանհիմբէկէ խօսում է մի անոտի փառասիրութենից զրգռված. պ. Վիյնը ներկայացնում է կղերականներին իբրև աւլով մոդ արած զիւղացիների մի կոյտ։ Ես պատիւ չեմ անի այդ յարձակմունքներին արժանացնել իմ պատասխանին։ (Ձախակողմը սաստիկ ծիծաղ է բարձրացնում)։ Կղերականութիւնը ազգի պատկերը, ազգի ներկայացուցիչն է։ (Ձախակողմեանները ընդհատում են)։ Այո, այսպէս է. երկրի մեծամասնութիւնը կաթոլիկ է. Բէլգիան ամենաբարոյական ազգերից մէկն է, և նա երբէք չէ կարող անբարոյական պատօրներ ունենալ։ (Ձախակողմը խռովութեան ձայներ կան)։

«Այն գաղափարները, որոնք այնքան յուզում են ազատամիտներին, 1793-ի գաղափարներն են. պ. Մօնտալանբէրը նրանց ռուսական սիստէմա էր անուանում, իսկ ես նրանց կանուանեմ կօզակի սիստէմա։ Իսկ ինչ կը վերաբերի մեզ, մենք հետևում ենք 1830-ի քաղաքականութեանը։

«Մարդիկ ոտնակոխ են անում բոլոր ազատամիտ գաղափարներ, որովհետև ազատամիտ կուսակցութիւնը մեծամասնութիւն է կազմում։ Ինչ որ դուք անում էք, պարոններ, այդ կը նշանակէ անպատուել իշխանութիւնը դուք անպատուում էք, որովհետև դուք նրան ի չարն էք գործ ածում։ բայց կամենալ քանդել մեր ուսումնարանները, այդ Աստուծուն էլ հաճելի չի թւի։

Պ. Կօսման.—Եթէ այդպէս է, ուրեմն Աստուած էլ կղերական է։ (Ընդհանուր ծիծաղ)։

«Այս բօպէիս կարծես ամեն բան ձեզ աջողութիւն է գուշակում, բայց այն ժամին երբ դուք փորձ կը փորձէք կործանել մեր ուսումնարանները, ինձ քաղցր է կարծել, որ Նախախնամութիւնը կը մեկնի իր ձեռքը և կը գրի պատմութեան գրքում այն սև օրհասականը, որ այսպէս բաներից յետոյ սպառնում է Բէլգիայի ապագայ ճակատագրին»։ (Աջ կողմը ծափահարութիւններ)։

Հետևեալ անգամ մենք մէջ կը բերենք պ. Ժօտտրանի ճառը. մենք այս վիճաբանութիւններով աւելի զբաղվում ենք, մանաւանդ նրա համար, որովհետև գլխաւորապէս այս երկու ճառերը (պ. պ. Ցակոբինը և Ժօտտրանինը) պէտք է վճռեն 1842 թ-ականի օրէնքի վերաքննութեան կեանքի և մահու խնդիրը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Գաբրիէլ Միրզոյեան, որին շատերը կասկածում են թէ իբր նա է գրել Ցեբ ի դէմ «Մշակի» 81 համարում տպված ռուսերէն յօդուածը, խնդրում է մեզ յայտնել որ նա այդ յօդուածի հեղինակը չէ և բոլորովին տեղեկութիւն էլ չունի թէ ով է դրա հեղինակը։

***

Փարիզից հաղորդում են զանազան եւրոպական լրագիրներին, որ միջովկիանական ժողովը 98 ձայների առաւելութեամբ 8-ի դէմ, վճռեց փոխել Պանամայի պարանոցը Լիմոնի ծոցից դէպի Պանամայի ծոցը։

***

Իկվիկայի մօտ, բաց ովկիանոսում պէրուական և չիլիական երեք զրահաւոր ֆրէգատների մէջ կռիւ ծագեց, և բոլոր երեքն էլ փչրվեցան։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ յունիսի 6-ին ԱՃՈՒՐԴ կը լինի կապալով տալու համար ՀԻՆԳ ՏԱՐԻ ժամանակով 656 քառակուսի սաժէն մեծութեամբ քաղաքային հողը, որ գտնվում է քաղաքի երկրորդ բաժնում, 10-դ մասում, Կուր գետի առաջին զառիվայրի մօտ, Երիսաւվի տան դիմացը։ Այդ հողի սահմանները հետևեալներն են. հիւսիսից Վորոնցովսկայա Նաբերեժնայա փողոց, արևելքից և հարաւից Կուր գետը, արևմուտքից Իսարլօվների կալուածները։

1—3

Дозволено Цензурою 31 Мая 1879 г. Тифлисъ Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона